ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 2015-Ա « 05 » հունիսի 2024թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի Հ.2862-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության եզրակացությունն ու քաղաքացու դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2011 թվականի հունիսի 30-ի «Երևանի Նուբարաշենի 17-րդ փողոցի հ.7 բնակելի տանը կից հողամասի և շենք-շինությունների նկատմամբ Ավթանդիլ Հակոբի Չնավարյանի իրավունքները վերականգնելու մասին» հ.2862-Ա որոշման /այսուհետ՝ Որոշում/ մեջ կատարել հետևյալ լրացումն ու փոփոխությունները՝

1) Որոշումը լրացնել նոր՝ 1.1 կետով հետևյալ բովանդակությամբ.

«1.1 ՀՀ կառավարության 15.12.2005թ. հ.2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հիման վրա, ք.Երևան Նուբարաշենի 17-րդ փողոցի հ.7 հասցեի 224.22քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:».

2) Որոշման նախաբանում՝ «1100.22» թիվը փոխարինել «1012.84» թվով.

3) Որոշման 1-ին կետում՝ «224.22» թիվը փոխարինել «127.0» թվով:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ